

առաջ քալեց դէպի ի անոնց գլխաւոր քաղաքը, որ է ԶԵԺԻՆԵՔՆ: Ուստի կընայ վախցուիլ որ այն կողմերէն մօսերս արիւնաչեղ պատերազմներու եւ մեծամեծ գիպուածներու լուրեր առնուին. վասն զի կընեն թէ Պոսնացիք ու Հերսեկովինացիք եւ բոլոր Բումէլի սլաւեան ազգերն ալ պատրաստուեր են ոտք ելնելու:

Ամերիկայի մէջ համազգական պատերազմը մինչեւ ցայժմ գագրելու պէս չերեւնար, ընդ հակառակն՝ օրէ օր աւելի կրորբորի: Մանասսաս ըսուած քաղաքին քով մեծ պա-

տերազմ մը եղեր է, եւ հիւսիսայինները յաղթուեր են. այժմ ուրիշ պատերազմ մըն ալ Փոթոմաք գետին վրայ պիտի լինի կընեն, եւ կվախցուի որ հարաւայինք շուտով յարձրկին մինչեւ Վաշինգտոն քաղաքին վրայ: Հիւսիսային Ամերիկացւոց խորհրդարանը ուրաշեր եւ լինքորն գահերէցը հաստատեր է որ հարաւայիններուն ծառայութեանը մէջ գտնուող գերիներէն ոլ որ անցնի հիւսիսայնոց կողմը, իսկոյն ազատ համարուի: Այս բանով հաւանական է որ վերջապէս յաղթութիւնը ձեռք ձգողները հիւսիսայինք լինին:

Ն Ե Բ Ֆ Ի Ն Լ Ո Ւ Բ Ե Բ

Կայսերական վճռով որոշուեր է որ 1865-էն սկսելով՝ ըմպելիքաց մենավաճառութիւնը պիտի գագրի, եւ անոր տեղը պիտի հաստատուի միակերպ մէկ տուրք մը որ ըմպելիքներէն պիտի առնու տէրութիւնը:

Այս վճռոյն զօրութեամբը ամէն մարդազատ պիտի լինի ըմպելիք վաճառելու Ռու-

սաստանի մէջ: Խսկ օղի շինելու իրաւունքը տրուած է ամենայն ազնուականաց եւ պաշտօնատեարց կամ ասաինանաւորաց, երեք կարգի վաճառականաց, արածնութիւններ ունեցող ժողովրդոց, այդի ունեցող մարդկանց, եւ Աժտէրիսանի՝ Պեսարապիոյ ու իրիմու մէջ ամենուն անխոտիր:

Ն Ա Ր Ա Տ Ի Պ Գ Ի Ր Ք

Արհեստ Քաղցրաւենի շինելոյ.

Մեծարգոյ Պարոն Յովիաննէս Յակոբ Ամիրայեան Մամիկոնեանց ուսումնասէր անձը հրատարակեց մօտերս ի Թիֆլիզ, ի տպարանի Գ. Մելքոնմեանց եւ Զ. Էնֆիանեանց, այս քաղցրաւենիք (անուշ, Թաթլը, կիւլէնկի) շինելու արհեստին տետրակը, զոր կարդալով, եւ տեղեկագոյն անձանց կարծիքն ընդունելով՝ արժանաւոր տեսանք ամենայն գովութեան: Գլխակարգութեանց ցուցակն ալ ըստ բաւականին կցուցընէ որ այս գրքոյկը իւր համառօտութեանը մէջ շատ ընդարձակ տեղեկութիւններ կրուայ. Եւ Թէպէտ լեզուն աւելի Թիֆլիզու լեզուին մօտ, սակայն ոնք այնպէս պարզ է որ ամէն տեղի Հայերն եւս դիւրաւ կարող են հասկընալ. վասն զի յայտնի կերեւի որ

յօրինողը փորձառու հմտութեամբ գրեր է գրածները: Փափաքելի է որ այս Ա. հատորը սիրով ընդունուի մեր ազգէն, որովհետեւ պատուական Պարոնը անով պիտի յորդորուի հրատարակելու հետ զիետէ ուրիշ հինգ տետրակ եւս, այսինքն Բ, Զանազան օշարակներ (Չէրպէթներ) ու շաքարօղիներ (ամպէրիյէներ) շինելու վրայ. Գ, Զայաստանի ու Տաճկաստանի տեսակ տեսակ խմորեղինաց եւ կերակրոց վրայ. Դ, Տայաստանի ու Տաճկաստանի տեսակ տեսակ խմորեղինաց եւ խմորեղինաց վրայ. Ե, Երոպական կերակրեղինաց եւ խմորեղինաց վրայ: Զ, Տայաստանի հարկաւոր գիտելեաց վրայ:

Ա. հատորը կծախուի նաև Խալիպեան Ուսումնարանին գրասենեակը, եւ գինն է 85 քոփ. արծ.;

ՀԱՆԵԼՈՒԹ.

Մընայ սընայ ես յանտառին,
Սուր երկաթով զիս կըտքեցին.
Երբ ողջ էի կայի լրուն,
Երբոր մեռայ նամըս առին: